

13858



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«13» 12 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 276 - 24

Նախաձեռնող՝

«Նորաշեն» ՆՏ ԱԿ
ք. Երևան, Հալաբյան փողոց 11-36

Գործունեությունը՝

Լուսաշող բնակավայրի կրթահամալիրի կառուցում
Արարատի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 276 - 24

«13» օգոստոսի 2024թ.

**Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրում կառուցվող
կրթահամալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Նորաշեն» ՆՏ ԱԿ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, Լուսաշող բնակավայր

Ներածական մաս. «ՆՈՐԱՇԵՆ» ՆՏ ԱԿ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրում կառուցել կրթահամալիր: Գործունեությունն իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 18012018-03-0045, / ծածկագիրը՝ 03-048-0038-0005 /, Վեդի համայնքի ղեկավարի կողմից 29.05.2024թ.-ին № 6309 տրված ցանկադրամատակարարական առաջադրանքը:



աշակերտական լաբորատոր սեղաններով: Քիմիաի լաբորատորիայում տեղադրված 1 օդաքաշ պահարան: Լաբորատոր սեղանները համալրված են վարդակներով, քիմիաի լաբորատոր՝ սեղանները լրացուցիչ համալրված են ջրի ծորակներով: Դասարանները նախատեսված են 24 աշակերտի համար: Շենքի առաջին հարկում գտնվում են գլխավոր նախամուտքը, պարետի և վարչական սենյակները: Դպրոցը ապահովված է բժշկի կաբինետով, որը կահավորված է անհրաժեշտ բժշկական կահույքով: Նախատեսված է մարզասրահ 60 տեղանոց տրիբունայով, հանդերձարաններ սանհանգույցով, մարզիչի առանձնասենյակ և գույքի պահեստ: Առաջին հարկում գտնվում է հանդիսությունների դահլիճը 144 տեղով իր հանդերձարանով, որը հնարավորություն է տալիս անցկացնել երգի, թատերական, երաժշտական և պարարվեստի խմբակային դասընթացներ: Նույն հարկում նախատեսված է բուֆետ բաշխման տարածքով: Դպրոցի երկրորդ հարկում նախատեսված են դասարաններ, ինֆորմատիկաի կաբինետ, ռազմագիտության դասարան և ռոբոտաշինության կաբինետ: Դպրոցի նկուղում (թաքստոց) տեղակայված է ավանդական գրադարան գրապահոցով և ընթերցասրահով, որտեղ տեղադրվաց են համակարգիչներ և պատճենահանման սարքավորում: Նույն հարկում է գտնվում էլ, կաթսայատունը, էլ. վահանակը, սան. հանգույցներ, բուժկետ:

Դպրոցին կից նախագծված է մեկ հարկանի մանկապարտեզ, բաղկացած 2 հատ 20 տեղանոց խմբակային բջիջներից: Խմբերը համալրված են հանդերձարաններով, ննջարաններով, խմբակային սենյակներով, բուֆետներով և սան. հանգույցով: Մանկապարտեզում նախատեսված է բժշկի կաբինետ և վարչական սենյակներ: Մանկապարտեզի և դպրոցի երեխաների սննդի մատակարարումը կազմակերպվում է դպրոցի բուֆետից: Համաձայն գնահատման հաշվետվության Լուսաշող համայնքում նոր կառուցվող դպրոցի տեղակապման նախագծից բացի առաջադրված է մշակել տարածքի բարեկարգում: Հաշվի առնելով որ դպրոցը կառուցվում է գոյություն ունեցող դպրոցի հողատարածքում, սույն նախագծով մշակվել է ընդհանուր գլխավոր հատակագիծ, հաշվարկային ժամանակաշրջանի համար: Դպրոցը ունի երկու գլխավոր մուտք արևմտյան կողմից, մանկապարտեզի և դպրոցի համար նախատեսված, և երկու մուտք շրջանցիկ ավտոճանապարհից հարավի կողմից: Տարածքի գոտիավորման նախագծով մշակված են անհրաժեշտ ֆունկցիոնալ գոտիները և նրանց կապը շրջակա միջավայրի հետ: Գլխավոր հատակագծոց հարավ արևմտյան մասում նախատեսված է արևային պանելների համար տարածք, որի համար տեղադրվում է նոր լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան: Նախագծով մշակված են տարածքի ուղղաձիգ վերակապման, նշահարման հատակագծերը ընդհանուր գլխավոր հատակագծի սահմաններում: Ծածկույթների և հողային զանգվածների հաշվեկշռի հատակագծերը և ծավալների հաշվարկը կատարված է հատկացված հողատարածքին կից նախագծային հաշվարկային ուրվագծի սահմաններում: Բարեկարգման նախագծով նախատեսված են շվաքարաններ մանկապարտեզի խմբերի համար, նստարաններ և աղբամաններ, գոյություն ունեցող դպրոցի ներսի միաշիթ 12 ցայտաղբյուրը նոր դպրոցի մուտքի մոտ, խաղադաշտ, խաղահրապարակներ, կանաչապատ տարածքներ, սպորտային հրապարակ: Կրթահամալիրը նախատեսվում է ցանկապատել:

Կրթահամալիրի տարածքում նախատեսվում է կառուցել 110.2 կՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 190 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 14 ՖՎ խմբի: ՖՎ կայանի փոխակերպիչները թվով 2-ն են՝ 50 կՎտ



պիկային հզորությամբ, որոնք մոնտաժվելու են ՖՎ հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: 1-ին փոխակերպիչին միանալու են թվով 6 խմբեր, իսկ 2-րդին՝ թվով 8 խմբեր: Գազամատակարարման համակարգը բացակայում է: Էլեկտրամատակարարումը հնարավոր է իրականացնել 250 կՎտ հզորության թիվ N 8089 տրանսֆորմատորային ենթակայանից, որը գտնվում է դպրոցի տարածքից շուրջ 2 մ հեռավորության վրա: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել բնակավայրում գտնվող համայնքապատկան աղբյուրից՝ Ø40 մմ տրամագծի մետաղական խողովակից: Լուսաշող բնակավայրում բացակայում է կոյուղու կենտրոնացված համակարգը: Նախատեսվում է կառուցել կոյուղաջրերի բիոմեխանիկական մաքրման կայան կամ կոյուղու կուտակման հոր՝ անհրաժեշտ հաշվարկային ծավալով: Դպրոցի շենքի և տարածքի հակահրդեհային ջրամատակարարումն և հրդեհաշիջումն հնարավոր է իրականացնել դպրոցի տարածքում ջրի պահուստային հորից: Համայնքապատկան աղբյուրից Ø 40 մմ տրամագծի մետաղական խողովակից: Միացման կետը գտնվում է դպրոցի տարածքից շուրջ 500 մ հեռավորության վրա:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 12190 մ²
- Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 3388.47 մ²
- Բարեկարգման մակերես 5723.27 մ²,
- Կանաչապատման մակերեսը՝ 3078.26 մ²

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կազմելու է՝ 26113 մ³, որից հետլիցքը՝ 7800 մ³, ավելացած 18313 մ³ հողային զանգվածը տեղափոխվելու համայնքի կողմից օրենքով սահմանված վայր: Հետլիծքի համար նախատեսված հողային զանգվածը կպահպանվի շինհրապարակում փոշենստեցման համար պարբերաբար կիրականացվի ջրցան: Գործունեության տարածք բուսականությունից զուրկ է: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Առաջարկվող ծառատեսակների ու թփատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով տեղանքի հողակլիմայական ու էկոլոգիական վիճակը: Կանաչապատման ենթակա տարածքի սահմանագծով երեք կողմերից նախատեսված է հիմնել ծառերի երկշերտ բուֆերային գոտի, որը ունի փոշեկլանող և քանու հոսքը թուլացնող նշանակություն: Ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման ժամանակ տնկվելու են ընդհանուր 48 ծառեր, և մոտ 530 թփատեսակ:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է՝ կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաջողականությունն ապահովելու նպատակով, նորատունկ բուսականության, ծառերի չկաջելու դեպքում՝ նոր ծառատեսակներով փոխարինում:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների



ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևույթային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստոցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շենքերի քանդումից շինարարական աղբի առաջացում, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հողային ռեսուրսների պահպանության համար ձեռնարկվելու են միջոցառումներ, որոնք կբացառեն բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում՝ դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Կրթահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափի ծածկի առկայությամբ,



- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթաման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Պատճառաբանական մաս. գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավարի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն ~~անհրաժեշտ է իրականացնել~~ <<



օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Նորաշեն» ՆՏ ԱԿ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վեդի համայնքի Լուսաշող բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան